

Կարծիք

Գոհար Կարենի Սահակյանի «Հակոբ Կարապենցի փոքր արձակը. գրական առնչություններ» ատենախոսության մասին

Մեր գրականության մեջ շատ չեն այն գրողները, ովքեր բացի գեղարվեստական գործեր ստեղծելուց, զբաղվել են և գրականության հարցերով և կամ դրան անդրադարձել են դեպքից դեպք, այն էլ իրենց գործերի առիթով: Քչերից մեկն է Կարապենցը, քանի որ նրա մտահոգությունները մշտապես դուրս են սեփական գեղարվեստական աշխարհի սահմաններից: Մարդ ստեղծագործողի՝ հայրենիք-սփյուռք խնդիրների քննության վերաբերյալ անթաքույց ու տևական մտասևեռումներն առանցքային նշանակություն ունեն Կարապենցի համար: «Գրողը և գործը» հոդվածում ասում է. «Իմ Կարթագենի դուստրը» վեպը բողոքի աղաղակ է Վիերնամի պատերազմի դեմ, «Ադամի գիրքը» քննադատություն՝ սպառողական հասարակարգի դեմ, իսկ «Ամերիկյան շուրջպարը», մեծ մասամբ պատկերումը ամերիկյան հասարակության ներկա անկիրք ու աներազ թմբիրի: Ես դժգոհ եմ: Սակայն մենակ չեմ: Բոլոր գրողները դժգոհ են, որովհետև նրանք խիղճն են հասարակության»: Այս յուրատեսակ ինքնադիտարկումը խոսում է գրողի՝ հարցերը համընդհանուր կապերի մեջ տեսնելու մղումի մասին, թեև հայ գրականագիտական միտքը ավելի կարևորում է գրողի ազգային նկարագիրը, նրա մտահոգությունները, մեր լինելության խնդիրները և այլն:

Ամեն պարագայում, Կարապենցի մասին խոսելիս մենք պետք է նկատի ունենանք այս երկու կարևոր թևերը՝ հակառակ դեպքում կընկնենք անհարկի ծայրահեղությունների մեջ: Ասեմ, որ Գոհար Սահակյանը իր աշխատանքը շարադրելիս տարբեր գլուխների համադրմամբ հիմնականում պահպանել է այս պահանջը, և սա նրա շարադրանքի կարևոր որակներից է:

Ներածության մեջ Գոհար Սահակյանը ճշտում է այն ուղիները, որոնցով էլ տանում է հետագա շարադրանքը: Իբրև ատենախոսության գլուխների հաջորդականության սկզբունք՝ ընտրել է ժամանակագրականը՝ այն մտայնությամբ, որ նման մոտեցումն ավելի լավ հնարավորության կտա գրողի աշխարհայացքային զարգացումները դիտարկելու իմաստով: Այս մոտեցմանը միահյուսվում է համեմատական քննությունը՝ որպես հիմնական գիտամեթոդ: Այս երկու նախապայմանները շարադրանքը գերակշիռ մասով դարձնում են նկարագրական: Գրականագետի խնդիրը վերջին հաշվով ոչ այնքան տվյալ հեղինակին ներկայացնելն է, որքան արժևորելը, նրա տեղն ու դերը ճշտելը գրականության մեջ, հարկ եղած դեպքում և հակադրվելը:

Շարադրանքի կարևոր առանձնահատկություններից մեկը Կարապենցի երկերի, հայ և համաշխարհային գրականության միջև եղած կապերի, առնչությունների հարցն է: Անկասկած, այս պահանջը, որ արտահայտված է աշխատանքի վերնագրում, ասելիքը դարձնում է հետաքրքիր ինչպես տվյալ գրական երկերի գեղարվեստական արժեքը գնահատելու իմաստով, այնպես էլ հայ գրողի մտահոգությունները՝

կապված մարդկության ապագայի մասին սթափ դատողություններով: Այդ զուգահեռումներին, որ կատարել է Գոհար Սահակյանը, օգնել է հենց հեղինակը՝ իր առանձին հուշումներով, քանի որ Կարապենցն անկեղծ է իր գրական ազդեցությունների սահմանները նշելիս: Համաշխարհային գրականության վարպետներից նա առանձնացրել է Դոստոևսկու, Չեխովի, Ֆլոբերի, Հեմինգուեյի, Սարտրի, Կամյուի, Բեկկետի, Սարկեսի և այլոց անունները: Հայ գրականագետներն առանձնացրել են Չարենցի, Բակունցի, Վարուժանի, Պարույր Սևակի, Մաթևոսյանի, Վահե Օշականի, Սարոյանի և այլոց անունները:

Ատենախոսը Դոստոևսկու, Սարտրի, Կամյուի ու Կարապենցի ստեղծագործությունների միջև աշխարհայացքային կապեր է տեսնում, անդրադառնում Ֆլոբերից, Հեմինգուեյից տեխնիկական հնարքներ ու վարպետություն է ուսանելու փաստին/10/: Քանի որ Սահակյանը տիրապետում է նյութին, մեջ է բերում գրողի կարևոր դիտարկումներից մեկը, ինչն առավել որոշակի է դարձնում նրա հիմնական գրական աշխարհի յուրահատկությունները. «Սարոյանից սովորել եմ անմիջականություն ու անսեթևեթությունը: Տոլստոյից՝ երբեմն տուժելով, ինքնամտորումները, Ջեյմս Ջոյսից՝ գաղափարների հարակցության հոսանքը: Կազանձակիսը ինձ սովորեցրեց դաժանորեն ճշմարտությունը հետապնդելու անհրաժեշտությունը արվեստի մեջ: Շահնուրը՝ օտարականի ցավը: Իսկ ամերիկացի վաղամեռիկ վիպասան Ռայմոնդ Քարվերը՝ խիտ գրելու առաքինությունը...»/11/:

Այս դիտարկումներն ատենախոսը հնարավորինս արծարծում է շարադրանքի ընթացքում, որքան էլ դրանք դիպվածային թվան: Բայց քանի որ այդ հեղինակները բավականին շատ են, նրանց և Կարապենցի ստեղծագործությունների առնչության հարցերն առանձին դեպքերում այնքան էլ խորը չեն:

Ասենք, որ Գոհար Սահակյանը տիրապետում է նյութին, շարադրում է գրագետ լեզվով, բացահայտում է գրական առնչություններ, որոնք հետաքրքիր են, ձգտում է ընդհանրացումներ անել: Սրանք գովելի որակներ են, որ դրսևորում է դիսերտանտը: Մեզ համար առանձնապես կարևոր է, որ նա պատմվածքների, դրանցում արտահայտած խնդիրների առնչություններն ու կապերը տեսնում է ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային գրականության երևելի գործերի միջև:

Այսօր գրողի երկերը փիլիսոփայությունից դուրս քննելը պարզապես անհնարին է: Մանավանդ, երբ խոսքը վերաբերում է Կարապենցին:

Գոհար Սահակյանը կարևորում է էկզիստենցիալիզմի և Կարապենցի երկերի միջև եղած կապերը: Ավելին՝ համաշխարհային գրականության և մասնավորապես գոյապաշտության ու Կարապենցի գրական երկերի միջև եղած հարցերի քննությունը համարում է իր աշխատանքի գիտական նորույթը:

Խոսելով Պերճ Զեյթունցյանի, Վահագն Գրիգորյանի, Նորայր Ադալյանի, սփյուռքահայ գրող Զարեհ Որբունու և հայազգի օտարազիր գրողներ Վահե Քաչայի, Արթուր Ադամովի մասին՝ անցում է կատարում Կարապենցի պատմվածքներին: Նա հետաքրքիր դիտարկում է անում՝

անդրադառնալով տարագրության և գոյապաշտության համամարդկային թեմաների զուգորդումներին, որ արդեն նկատել էր Գրիգոր Հակոբյանը: Գոհար Սահակյանը ավելացնում է կարևոր առանձնահատկություն. հայը Կարապենցի երկերում տառապում է ոչ թե ազգային պատկանելության պատճառով, ինչպես Շահնուրի վեպում, այլ օտար միջավայրի պատճառով: Հետևապես ազգային խնդիրները մղվում են երկրորդ պլան, առաջնային են գոյապաշտական թեմաները: Ի վերջո՝ Սահակյանը «Անծանօթ հոգիներ» շարքում եղած գործերի օրինակով իրականությունից մարդու օտարման գոյապաշտական խնդիրը իմաստավորում է տարագրության թեմայով:

Հետաքրքիր են գոյապաշտությանը հատուկ հասկացությունների՝ Կարապենցի գործերի օրինակներով վերլուծությունները: Անցորդի կերպարի վերլուծությունը Կոստան Ջարյանի արձակում հանդես եկող հերոսի զուգահեռմամբ, բացահայտում է կարևոր հատկանիշներ, որոնք բնութագրում են Կարապենցի արձակն ընդհանրապես: Ջարյանի արձակում անցորդն ազգային ինքնությամբ տարանջատվում է միջավայրից, Կարապենցի մոտ՝ հերոսը դրսևորում է համակուշադրության ու ես-ի կորուստ:

Այնուհետև քննվում են գոյապաշտությանը բնորոշ հասկացություններն արձակագրի երկերի օրինակով՝ կղզու կամ ծովի պատկեր, որ մենության խորհրդանիշն է, ինքնության արտահայտություն է դոյակը, մեծ քաղաքի ու օտարման, բնություն-քաղաքակրթություն, քուն-մահ, մահից փախուստի և դրա անխուսափելիության, տան

բացակայության փոխաբերության, հուսալքության, տազնապի, լքվածություն և այլ հասկացություններ: Ընդհանուր շարադրանքում Սահակյանը գրողի գոյապաշտությունը բնորոշում է որպես կարեկցման ունակություն:

Եթե Սարտրի համար հուսալքությունը դիտարկվում է որպես Աստծո բացակայություն, ապա Կարապենցի հերոսի գոյաբանական հենարանը հայրենիքն է: Սա Գոհար Սահակյանի կարևոր եզրահանգումներից է:

Ատենախոսության երկրորդ գլուխը իր շարադրանքով, զուտ իմաստային առումով հակադրվում է նախորդին: Ստացվում է այն տպավորությունը, որ առաջին գլխում Կարապենցի գրականությունը առնչվում է գոյապաշտությանը, իսկ երկրորդ գլխում չի առնչվում դրան: Դա պարզապես անհնարին է գրողի պարագայում: Այստեղ ևս նա առնչվում է գոյաբանական ընկալումներին:

Պարզապես առաջին ժողովածուի մեջ արծարծած հարցադրումները կապվում են էկզիստենցիալ փիլիսոփայության, այսպես ասած դասական կամ հին շրջանի հետ, այստեղ կարելի է առանձնացնել Բլեզ Պասկալին, Կիերկեյրգորին, Հուսեռլին և այլն: Իսկ կյանքի փիլիսոփայությունը, որ լրացնում էր գոյապաշտության փիլիսոփայությունը, առաջացավ 19-րդ դարի վերջին երեսնամյակում, այստեղ կարելի է հիշել Հանրի Բերգսոնին, ամերիկացի Ուիլյամ Ջեյմսին, Նիցշեին և այլն: Դրա հիմքում ընկած է այն համոզմունքը, որ

աշխարհայացք կառուցելու համար բանականությունը բավական չէ, անհրաժեշտ է հաշվի առնել նաև մարդու ապրումները:

Այս խնդիրները՝ կյանքի փիլիսոփայությանը բնորոշ հասկացություններով, որոշակիորեն արտահայտվել են շարադրանքի երկրորդ մասում: Գ՝ Սահակյանը համոզված է, որ «Կարապենցի արձակը գոյապաշտական թեմատիկայից /«Անձանոթ հոգիներ»/ անցում է կատարում ազգային թեմատիկայի /«Նոր աշխարհի հին սերմնացանները»/:

Նման կտրուկ ձևակերպումը արտաքուստ միայն կարող է ճիշտ համարվել: Ազգային թեմատիկան մշտապես եղել է Կարապենցի ստեղծագործության առանցքը: Այլապես կարող ենք ասել, որ «Անձանոթ հոգիներ» շարքի նույնանուն պատմվածքում կամ «Վերջին կայարանը» երկում ազգային թեմատիկան բացակայում է: Մինչդեռ գրեթե յուրաքանչյուր գործում գրողը ներկայացնում է ազգային նկարագիր ունեցող արևելքցու՝ հայի խառնվածքի հակազդեցությունը միջավայրի հանդեպ և դրանից ծնված ինքնաքննությունը:

Ինչ վերաբերում է գոյապաշտությանը, ապա պետք է ասել, որ Կարապենցը դեմ է «անարմատ գոյապաշտությանը»: Այս ձևակերպումը գրողը կրկնում է «Գրողը իր հետ, այլոց հետ» հոդվածում/73/, ինչն էլ իր աշխատանքում մեջ է բերել Գոհար Սահակյանը: Պարզապես նյութի թեմատիկ բաժանումը նրան կաշկանդել է և թույլ չի տվել ավելի ընդարձակել խոսքի սահմանները:

Հանգամանորեն վերլուծելով շարքի պատմվածքները՝ Սահակյանը իրավացիորեն պատմվածքների մի մասում տեսնում է ազգային արժեհամակարգի և ավադությունների պահպանման համար հաղթանակ, իսկ մյուս մասում՝ պարտություն: «Հայրերի և որդիների բախման հավերժական թեման,- գրում է Սահակյանը,- Կարապենցի արձակում երկու տարբեր արժեհամակարգերի՝ ազգայնականության ու միջազգայնականության բախման թեմայի համատեքստում է ներկայացված» /74/: Սա ճիշտ դիտարկում է և արտահայտում է շարքի հիմնական տրամադրություններից մեկը:

Այս հիմնավորումն անհրաժեշտ է անցում կատարելու համար երրորդ գլխին: Այստեղ արծարծված հարցերը վերաբերում են «Միջնարար» և «Ամերիկյան շուրջպար» շարքերին: Առաջինում, ինչպես նկատել է Սահակյանը, արծարծվել են համամարդկային նշանակության թեմաներ ու խնդիրներ: Բացակայում է սյուժետային կառույցը, գերակշռում է խոհագրական տարրը: Տարածական պայմանականությունն ու ժամանակի հարաբերականությունը սյուժետային անորոշություն են ստեղծում: Առարկայական ժամանակի և մասնավորաբար տիեզերական ժամանակի զգացողությունը գրողին հնարավորություն են ընձեռում թափանցելու կերպարների ներաշխարհը: Սահակյանը իրավամբ ընդհանրություն է տեսնում Կաֆկայի և Կարապենցի երկերի միջև: Քաղաքակրթության արդյունք մեքենան ճզմեց անհատին, սպանեց նրա անհատականությունը, իլեց մարդուն իր հողից,

համայնքից և նետեց անհայտության երախը: Այս ամենի պատճառը գրողը համարում է կյանքի փիլիսոփայության հենքի բացակայությունը:

Այս տեսանկյունով էլ Սահակյանը քննում է օտարման և մենության թեմաները գրողի երկերում: Իսկ «Ամերիկյան շուրջպար» շարքում Սահակյանը ուշադրություն է դարձրել հերոսների ապրումների, հոգեբանության սրընթաց զարգացումների վրա, որոնք տեղի են ունենում «սահմանային իրավիճակներում»: Վերջապես հիմնավոր են դիտողությունները՝ կապված «Ամերիկյան շուրջպար» շարքի մատուցման կերպը բացահայտելու իմաստով՝ «սուրյեկտիվ պատումին փոխարինում է պատումի օբյեկտիվ եղանակը»: Հաճախ գրողը ապավինում է իր հերոսների հոգեբանական երկիմաստությանը:

Այսպիսով՝ աշխատանքը իր հիմնական ուղղվածությամբ բացահայտում է այն գրական տեղաշարժերը, որ կատարվել են Կարապենցի ստեղծագործությունների, մասնավորապես փոքր արձակի ոլորտում: Հետաքրքիր են Կարապենցի և համաշխարհային գրականության առանձին երկերի միջև տարված զուգահեռները:

Այժմ դիտողությունների մասին:

Առաջին՝ որքան էլ տեղին են արտասահմանյան գրողների երկերի ու Կարապենցի պատմվածքների միջև եղած զուգահեռները, բավականին քիչ են հայ գրականության և գրողի երկերի միջև եղած առնչությունների հարցերը: Օտարման, Արևմուտք-Արևելք փոխհարաբերության խնդիրները լավագույնս արտահայտված են Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործության մեջ: Կարապենցը ակնածանքով է խոսել

Մաթևոսյանի մասին: Օտարման ինդրի այն քննաբանությունը, որով առաջնորդվել է Մաթևոսյանը իր ստեղծագործական կյանքի ընթացքում, չէր կարող ներազդած չլինել Կարապենցի երկերի վրա:

Երկրորդ՝ վերլուծության ընթացքում քիչ ուշադրություն է դարձվել գրողի կերպարաստեղծման առանձնահատկությունների, մատուցման ձևերի վրա. արդյունքում համահարթվել են ուժեղ ու թույլ գործերը:

Մեր գրականության մեջ /ինչպես նաև համաշխարհային/ սովորաբար բնավորությունների կերտման երկու ճանապարհ գոյություն ունի: Դա պայմանավորված է տվյալ անհատականության փորձով, երևույթների ընկալումներով, աշխարհայացքային ըմբռնումներով և գեղագիտական փիլիսոփայությամբ: Իհարկե քիչ չէ նաև ավանդույթի ուժը:

Առաջինը ավանդական ուղին է, հայ գրականությունը գերակշիռ մասով առաջնորդվել է բնավորությունների կերտման մոնոլոգային սկզբունքով. դրա դասական օրինակներ են Րաֆֆին, Մուրացանը, Նար-Դոսը և այլոք: Այս սկզբունքով են գրվում և ստեղծվում գրականության, արվեստի տարատեսակ ձևերը:

Երկրորդը «բազմաձայն գրականության» ուղին է, որտեղ բացակայում է միաբևեռ կառույցը: Պատումի մեջ միմյանց համադրվող կերպարները դառնում են հեղինակի համար հավասարաթեք ուժեր: Սա դժվար է այն իմաստով, որ հեղինակային վերաբերմունքը բացարձակապես անկողմնակալ է: Եթե մենախոսական գրականության մեջ նաև ճշմարտությունն է մոնոլիտ, ամբողջական, ապա բազմաձայն

գրականության մեջ դա պարզապես անհնարին է: Ճշմարտությունը չի կարող լինել միաշափ հարթություն, այն իրապես ենթակա է բազմակերպ վերլուծության:

Կարապենցի գրականությունը գերակշիռ մասով հետևում է մեր գրականության ավանդական ընթացքին՝ հեղինակային հայացք մի կեսից՝ բարձունքից դիտված, դրանք գերազանցապես հեղինակի կենսագրական իրողություններ են՝ գեղարվեստական ընդհանրացման հասցված: Ելակետն արդեն պահանջում է մոնոլոգային գրականություն՝ ակնհայտ ճշմարտությամբ: Այստեղ երկակիության մասին կարելի է խոսել թեականորեն, ամեն ինչ պարզ է:

Բայց «Միջնանար»-ում արդեն նկատելի է բազմաձայնությունը, տարբեր կերպարների հավասարաթեք գոյությունը: Սա Կարապենցի գրականության մեջ նոր որակ է, որ հաղթահարում է «մոնոլոգային գրականության» սահմանները: Շարադրանքը նկատելիորեն կշահեր, եթե այս գործերը քննվեին իրենց մատուցման ձևերի առանձնահատկությունների մեջ:

Երբորդ՝ քննվել են հիմնականում գրողի չորս ժողովածուները, սեփական ընդհանրացումները քիչ են, նկատվում են վրիպակներ (էջ 3, 9, 17, 22, 34, 49, 101, 122, 125, 140)

Դիտողություններով հանդերձ՝ ատենախոսությունը հաջողված է, առաջարկում ենք Գոհար Սահակյանին շնորհել բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան:

Ընդդիմախոս՝

Վ. Գրիգորյան

Բան. գիտ. դոկ., պրոֆեսոր